

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ

Գրութիւնք ետ չեն
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երէ կ'ուզե՛ք «Հայեղի»-ին մէջ աղոյր երեւնալ,

Պահի՛ք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ



ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ ԱՆՈՒՇ ԶՈՒՐԸ

Կ. Պոլսէն կը գրեն.

«Համարձման տօնին սըը Հիւանդանոցի անուշ ջուրի նորաշէն աղբիւրին բացուածը կատարուեցաւ եկեղեցական արարողութեամբ. աւագանին մէջ օրհնուած գինի լեցուելով, թէ՛ եկեղեցականները և թէ՛ ժողովուրդը կարգաւ աղբիւրին մօտենալով՝ խմեցին մէյմէկ բաժակ ջուր: Այս միջոցիս Գըրգ Զէշմէի անուշ ջուրը յատուկ խողովակներու և ծորակներու միջոցաւ բաժնուած է Հիւանդանոցի բոլոր յարկերը: Նոյնպէս հասարակ ջուրը, տաք եւ պաղ, կրկին խողովակներով ամէն կողմ՝ բաժնուած է: Ամէն արահի մէջ երեք ծորակ շինուած է, որոնց մէկէն անուշ ջուր, միւսէն լուացուելու տաք ջուր, եւ երրորդէն լուացուելու պաղ ջուր պիտի հոսի:

Անուշ ջուրի մասին եղած այս կարգադրութիւնը, որ ի գլուխ ելաւ արդի Հոգաբարձութեան օրով, երկար ատենէ ի վեր զբաղեցուցած է կարգ մը Հոգաբարձութիւններ, առանց արդիւնքի: Գրեթէ քառասուն տարի

առաջ, 1860 սեպտեմբերին Փափաղեան Միւրիճան Ամիրա ծանոյց Բաղաքական ժողովին մէջ թէ Հիւանդանոցի կէս մասնաւոր անուշ ջուր նուիրած է. Այվաշեան Յովհաննէս անդան ալ մասնաւոր մը ջուր յատկացուց Հիւանդանոցին, մահիչիւղ մնացած ջուր մը գլտնելով: Սակայն ժամանակին Հոգաբարձութիւնը չյաջողեցաւ ջուրին ճամբաները շինել տալ, նիւթական միջոցներու պակասութեան պատճառաւ:

Հիւանդանոցի մէջ ուրիշ նորութիւն մըն ալ մտցուեր է այս օրերս: Հիւանդանոցի սըրահները հաղորդակցութեան գրուեր են թէլեֆոնով: Ասիկա ալ օգտակար ու գործնական նորութիւն մըն է:

(Այսօրուան թղթաբեր)

ԱՏԱԲԱԶԱՐԻ ՈՃԻՐԸ

Երեքաբթի օրուան թուականաւ Ատաբազարէն կը գրեն «Արևելք»-ի թէ, աշքատ որբեայրի մը 17 տարեկան Պայծառ անուն աղջիկը թթաստան գացած պահուն երեք չարագործներու կողմէ առեանգուեր է և մարմինը ջըր-

հօրէ մը գտնուեր է . հաստատուեր է թէ տարաբաղդ աղջիկը բռնաբարուած էր անլուր կերպով և անկէ ետքը ջրհօրը նետուած : Ոճրագործները կը փընտուին :

— Տեղւոյս աւագերէց Տ. Մարտիրոս քահանան հարկ եղած տեղեկութիւնները տուած էր կրօն. ժողովոյ , Ապտալեան Մանուկի կրկնամուսնութեան խնդրոյ մասին , յայտարարելով թէ Հիւր միւզեան Գէորգ քահանային ձեացուցած պսակին ո՛չ ինքը և ո՛չ Վառնայի թաղ . խորհուրդը արտօնութիւն կամ հրաման տուած են :

Կրօն. ժողովը որոշեց չեղեալ համարել կատարուած պսակը , արգիլել քահանան երեք տարի եկեղեցական պաշտամունք և խորհուրդը կատարելէ , և յանձնարարեց Վառնայի թաղ . խորհուրդին որ առած պսակդրամը ետ առնէ և հայ կարօտեալներու բաժնէ :

ՖԻԼԻՊԷԻ ԲԱԺԻՆԸ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՎԵԼՈՑ

Կ. Պոլիս , 21 Մայիս 1899

Շնորհակալութեամբ ստացանք եօթանասուն և ութ (78) օսմ. լիբայի գումարն , որ արդիւնքն էր ֆիլիպէի մէջ Տիկնանց մասնախմբի մը նախաձեռնութեամբ կատարուած վիճակահանութեան , ի նպաստ Վանսոյ սովատանջ մերազննից :

ՊԱՏԲԻԱՐԳ Կ. ՊՈԼՍՈՑ

Մաղափա Արքեպ.

— Պոլսէն կը գրեն թէ , Կաթողիկ հայոց հանգուցեալ Աղարեան Պատրիարք այնպէս մը կարգադրած է եղեր որ , իր ազգականներուն մնայ իւր հարստութիւնը , առանց գէթ պպտիկ բաժին մը հանելու ազգային բարենպատակ հաստատութեանց : Կ'ըսուի թէ 40,000 ոսկիի կը հասնի այդ հարստութիւնը :

(Եթէ այս լուրը ստոյգ է , Աղարեանի ազգասիրութեանը (?) վրայ ներբողներ շռայլող «Բազմավէպ»ին ականջը խօսի) :

Չորեքշաբթի գիշեր ի նպատո Տ. Չաքըրեանի տրուած ներկայացումը բաւական յաջող անցաւ . . . Դերասանական տեսակէտով : Անձնուէր երիտասարդաց խումբը քանիցս ընդհանուր գոհունակութեան և ծափահարութեան արժանացաւ . իսկ նպաստաւորեալը չի կրցաւ արժանանալ այնչափ նիւթական քաջալերութեան , որովհետեւ հանդիսականաց մեծ մասը՝ ազգային տոմսակ ունէր :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պուրկաշ 24 Մայիս 99

Տեղւոյս ազգային վիճակը երթալով սուր կերպարանք մը կառնու . ժողովուրդը դրդուած է Առնեմ Չտամ և իւր համախոհներուն դէմ , որոնք ամեն տեսակ ցած միջոցներու կը դիմեն . կռիւ , ժողովակներ անպակաս են ու կատաղաբար յարձակումներ կը գործեն անոր ասոր վրայ :

Սովելոց անունը շահագործելով , անոր 'ի նպաստ տրուած թատերական ներկայացման հասոյթին ճիշդ գումարը չիմացուեցաւ . հաշիւ կը պահանջուի իրենցմէ և հաշիւ չեն տար . ասկէ դիւրաւ կը հասկցուի այդ մասնաժողովի անդամոց ինչ տեսակ անձնաւորութիւններ ըլլալին : Այն օրը թատերասրահէն ժամը 2ին դուրս եկած են ամենքն ալ գինով վիճակի մէջ . կըսուի թէ՝ մինչեւ 120 ֆրանք գարեջուրի ստակ տրուած է : Փողոցին մէջ կըսկսին թրբական շարփի մը կանչել ու պողովով պողտելով դէպի Վանսի վարդանի սրճարանը կողողոն . սրճարանին գուռը քրստաւը վրայ կը հասնի ասոնց աղմուկին պատճառը իմանալու . մէկէն ամբողջութեամբ կը պատասխանեն թէ՝ «պիղ միլլաթ պաշիսի իղ , պիղտան բիթըլըբ շըդմազ» . բայց ոստիկանը ականջ չի կախելով՝ ամենքն ալ կը ցրուէ : Առնեմ Չտամ օրուան հերոսն է . իր համախոհներուն միջոցաւ յաջողեցաւ ամսական 60 ֆրանքին վրայ 24 ֆր.

ևս աւելցնել. պայմանաւ որ այդ դրամը գի-
նետունները պիտի ծախսեն ի միասին. ասկէ
զատ, ազգային հանդէսներէ եկած հասոյթ-
ներէ ալ 100ին 35 բաժին մը կաւնէ Առ-
նեմ շտամ:

Ահա ասանկներուն ձեռքը կը գտնուի
այսօր Պուրկազի ազգային գործերը:

ԿԱՅԾԱԿ

ԵՍ ՈՒ ՄԱՍԻՍԸ

Արեւմտք էր երբ
Լճի եզերքում,
Տխուր արտաքել
Ման էի գալիս.
Անդ ծառոց վերայ
Թռչունի գեղգեղում,
Պանդիսիս արիւն
Յոյս էիմ տալիս:

Ձեռիսը մեղմիկ
Փրչում էր զով-զով,
Այնուր Մասիս
Ասում էր բարով,
«Ա՛յ, պանդիսիս որդի
Ուսի՞ ես գալիս,
Ինչո՞ւ, ինչո՞ւ դու
Լալիս ես, լալիս »:

Ձայն տուի արտով
Հսկայ Մասիսին,
Մասիսը տարեց
Ինձ հետ միասին.
Այնտեղ նորոգուեց
Մոխր հին վերքեր,
Նորից երգեցի
Ձիւ մաշող երգեր:

Դե՛հ, ո՞ր է, Մասիս
Ասա մէկ տեսնեմ,
Իմ պապեհական
Սուրբ հողն ու ջուրը,
Ձէ՛ որ ամենից
Ձրկուեց Հայր,
Նրա տեղ տեսաւ
Կրակն ու սուրը:

ՌՈՒՆԾՈՐ

ԳԱՐԱԳԱՇ ՍԵՐՈՒՆԻ

ՀԵՏԱՔՐԳՐԱԿԱՆ

Մասնաւոր վարժարանի մը նպաստ
տրուած երեկոյթին հաշուեցուցակը մեզ
ղրկուած ըլլալով, նոյնութեամբ կը հը-
րատարակենք.

Մոտք

Կամաւոր նուէրներէ	80 ֆր.
5 ֆրանքնոց տոմսակներէ	200 "
3 " "	123 "
2 " "	66 "
1 " "	8 "
	477

Ելք

Տիւրիժէօնը	առանց վարձքի,
Բիւնօ զարնողներն	առանց վարձքի,
Խօսող ու երգողներն	առանց վարձքի,
Բայց ծախքը ելած է	214 ֆր.քի.
Պատրաստ դրամ ի սնտուկի	263
	477

Վասն զարմացման խելք չի հասնե-
լիք այսչափ ծախքին՝ կ'ստորագրենք.
Յունիս 2: 21.11.1900

Թ Ա Տ Ր Ո Ն Ա Ն Կ Է Լ Ս Լ Ա Վ Օ Յ

1899 Յունիս 12 Շաբաթ գիշեր ժամ 9

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՍՆԱԽԱՄԲԻ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՅ

ԱՆՁՆՈՒԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿՈՂՄԷ

Բ. ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ

Ըստ խնդրանաց ազգայնոց

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇԵՐՈՍՆԵՐ

Թատերախաղ 5 արարուած

Տոմսակները այսօրուրէն կը ծախուին
Տիար Յ. Պարսամեանի վաճառատունը:

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՍ

Իմ հաւատարիմ բարեկամս միօրինակ է, ուղղամիտ, պարզ և անկեղծ:

Նա իմ հոգւոյս շարժումները յիշեն կը ցոլացնէ, մինչև անգամ ամենէն դոյզն զգացումներս կիմանայ, և ամեն յանցանքիս համար ունի խելացի խրատներ:

Արդեօք իրիկունը կամ ամբողջ գիշերը անքո՛ւն անցուցած եմ, նա իսկոյն կիմանայ, և առաւօտունն ՚ի դարձիս զայն կը լսեմ իրմէ. «Է՛, շատ յոգնեցուցեր ենք աչքերնիս, տոգուն ենք այսօր. զգուշանա՛նք: Քաջողջութիւնդ կ'աւրես, այլ ևս մի՛ հսկեր այդչափ երկար ատեն»:

Բարկութեան մէջ եմ, նա ինծի կըսէ. «Ի՛նչ գարշելի կերպարանք է այդ, կարծես արիւն քսած ես երեսներդ. զգո՛յճ կեցիր. մի միայն բռնկելդ ուրիշ անգամ կրնայ զքեզ մեռցնել»:

Աղմուկ մը յարուցած եմ տանը մէջ, նա շուտով դէմքէս կը հասկնայ ու կըսէ ինծի. «Շատ գէշ վիճակ ունենալու է սիրտդ, վասն զի տգեղցած է դէմքդ»:

Ո՛հ, այո՛, շատ հաւատարիմ է, բարեկամս՝ և գիտէ՞ք, ով է այս բարեկամս.

— Իմ հայեղիս:

Յ. Շ.

ԲԱՐԻՁԻ ՄՕՏԱՆ

Բարիկի մէջ գիրք մը հրատարակուեցաւ, որ 1896ի մարդահամարին վրայ յենլով մեզ կը ներկայացնէ արհեստներու պատկեր մը: Բարիկի աշխատաւոր ժողովուրդի թիւն է 1,473,092. Ըսել է ամբողջ բնակչաց 58%. Արդ յիշեալ թուէն, 250,000 հոգի հագուստեղէնով կը զբաղին. որոց ամենամեծ մասը կիներ են: Զգեստի հետաւորիս կարեւորութեան վրայ գաղափար մը ունենալու համար բաւական է ակնարկ մը ձգել մե-

տաղի էնտուստրիային վրայ, որ զգեստեղէնին անմիջապէս յետոյ կուգայ և որ միայն 112 հազար մարդ կը գործածէ: Այս կը ցուցնէ թէ ի՛նչպէս մօտան Բարիկի մէջ իբրև թագաւոր կիշխէ. վասն զի իմանալու է թէ այդ 250,000 գործաւորներն կամ գործաւորութիւններն միայն բարիկցիները հագուեցընելու չեն զբաղած:

Յիշենք թէ 1886ին Բարիկի մէջ 5000 մօտիսթներ կային, տասը տարի յետոյ 1896ին, 11,000 եղած էր անոնց թիւն: Այսպէսով կարգարանայ Աիկթօր-Հիւկօի մէկ խօսքն թէ՛ «Բարիկի գլխարկներէն զատ ուրիշ գլխարկ կրել կարելի չէ»:

Այս գլխարկները զարդարելու համար 23,000 ծաղկեփաճաւ (շինծու ծաղկով) եւ փետրափաճաւ կ'աշխատին: Ասոնց քով կը գտնուին 4,000 բօքսէ շինող և ծախող. 25 հազար ճերմակեղէն շինող, 96,000 կար կարողութիւններ, իսկ լուացարարութիւններն անհաւատալի թիւ մը կը կաղմեն:

Աշխարհի բոլոր կոկիկներն ու կոկիկուհիներն կրնան ժամադրութիւն տալ Բարիկի 1900ի միջազգային ցուցահանգէսին. Բարիկ պատրաստ է զանոնք ընդունելու:

Ա. Ս. և Մ. Դ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ինքնաշարժ օրորոց մը հնարուել է Անգլիոյ մէջ: Հետեաքար այսուհետեւ մայրերն քաղցրիկ երգերով իրենց մանկանց օրորոցներուն քով նստելով, չպիտի շարժեն օրորոցներն, այլ մանկիկն լալուն պէս՝ մատը օրորոցին քովի ելեքտրական կոճակին պիտի դպցունեն, և օրորոցը պիտի սկսի ինքնին շարժիլ: Այս գիւտն անշուշտ մեծ ուրախութիւն կը պատճառէ այն մարց, որոց այնչափ հաճելի չէ մայրական պարտաւորութիւնները կատարել, և ընդհակառակն վի-

պագիրք այսուհետեւ չպիտի կրնան զարգարել իրենց վէպերը՝ օրօրոցի մայրական երգերու նկարագրութիւններով :

Ճարտնցոց զարմանալի սովորութեանց մէկն է՝ որ երբ կին մը զաւակ ծնի, իսկոյն անոր ամուսինը տանը պարտիզին մէջ նորատունկ (ֆիտան) կը հաստատէ, և տղան երբ մեծնայ ու ամուսնանայ, այդ մեծցած ու ծառացած տունը կը կը կտրուի, բազմոց մը կը շինուի և հարսն ու փեսայն անոր վրայ կը նստին :

Բժշկի ւնը յանձնարարութիւնը : — Անգղիոյ հռչակաւոր բժիշկներէն մին՝ երկայնակեցութեան համար առողջապահական կանոնաց կարեւորագոյնը կը համարի՝ ամառ ու ձմեռ ամէն առաւօտ պաղ ջրով թրջուած սպունդգով սրբուիլ : Տօթթօրը կը պնդէ թէ՝ ինքն շատ փորձերով հաստատած է այս ըսածին օգտակարութիւնը :

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ԳՐԱԳԷՏԻԿԸ

Տասնըութէն քսան տարու, երկայն մաշեր, ակնոց մը և ձեռքը վկայական մը, կամ կեղրանականէն և կամ Պէրպէրեանէն :

Ուսումնական խորհրդոյ անգամ չըլլալուն կը գարմանայ ու կը զարմանայ :

Կը կարծէ թէ Փրանսերեն գիտէ, ճէրիսէի Շարգիյի մէջ յօդուած աւելի կսկսի և շուկան գործ մը փնտռելով կը վերջացնէ :

Մէկ ու կէս մէթր երկայնութեամբ ունեւոր գրքեր ունի թեկն տակ :

Կը յայտարարէ թէ՝ Թէն, Սթենսեր, Բասթալ, Զօքենհաւեր, Սենդ-Պէօլ կը կարդայ, բայց հաւատացէք որ Բրքի Բարիզիէն յաւելուածը միայն կը թղթատէ սենեակին մէջ առանձնացած :

Իր հագուստին խնամք չի կրնալ տալուն

յանցանքը՝ գրականութեան վերագրել կուզէ :

Օձիքը միշտ աղտոտ եղած է նորեղակ գրագէտին և եղունգները մստ մը սուգ կը պահեն :

Թատրոն երթալ կուզէ բայց չի կրնար, Հոգեբանական և իմաստասիրական հարցերու վրայ յօդուածներ գրելու կեղք, սակայն նամակի մը հասցէն չէնքով շնորհքով գրելու . . . չի զիջանիր :

Մարդկային ընկերութեան դէմ ընդհանրապէս և Պոլսոյ հայ օրիորդներուն դէմ ի մասնաւորի բէն պահած է, որովհետեւ իր առաջին յօդուածը երկնալուն՝ Սան-Սթէֆանոյն սկսեալ մինչև Գափաքները ամեն հայ աղջիկ չէ սիրահարած իրեն :

Եկեղեցի չերթար անաստուածի հովեր առնելու համար և այնպէս համոզուած է թէ նշանաւոր գրագէտ ըլլալու առաջին պայմանը Աստուած չի ճանչնալն է :

Սիրոյ վրայ 2800 տող յանգաւոր եւ 25000 տող արձակ գրութիւններ ունի եւ երբ օր մը աղջկան մը հետ մինակ կը մնայ՝ իր դպրոցական կեանքէն անխօսքներ պատմելէ անդին չանցնիր :

Հօրը հետ շարունակ սրդողած է :

Իրեն համար յուսահատութիւնը՝ յօդուածի մը ետ գալուն մէջ կը կայանայ :

Ոչ օղի կը գործածէ և ոչ ալ ծխախոտ, գրականութենէ բաղած միակ օգուտնին է այս :

Իրենց համար Հայ աղգն է յանցաւոր եթէ գրագէտիկը Պէոյիւքտէրէ Եւսէք մը չի կրնար վարձել :

Երեսուն տարու եղած ատենը ոտանաւորն ալ կը մոռնայ, Փրանսերէնն ալ, տառասխալներ կընէ գրած ատենը, մաքուր կը հագուի և առատ օղի կը խմէ :

Նախկին գրագէտը ալ գործի մարդ եղած է և ուրիշներուն վրայ կը խնդայ :

Այնուհետեւ լրագիր անգամ չի կարդար :

Ուրիշ կը հետեւցնեմ թէ ամեն հայ իր կարգին գրագէտ եղած է երիտասարդութեանը :

ԴԱՏԱՄԵՍ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանա Բոժոժիկ և Ընկ.

Վառնա

Անցեալ գիշեր քաղաքապետական պարտէզին մէջ աւելածուին աղջերքը վայելեցին կարգ մը զարգացեալ երիտասարդներ, որոնք թատրոնէ վերադարձին՝ հոն իրարու վրայէ ցոտկելով... պիտ-սիտ-պիտ կը խաղային:

Սև ծով

Այս միջոցիս ծովեզերեայ քաղաքի մը Թաղ. խորհրդոյ պաշտօնը կը վարեն հետևեալ անձինք:

Գարտուղար Մանտիկ
Լուսարար Խաչիկ
Ժամկոչ Փառնիկ
Մէզառճի Գառնիկ

(Աստուած ողորմի այդ քաղաքին)

Թ. Բաղարճը

Տեղւոյս քառեխրս քարոզիչը յուշարկաւորութեան մը առթիւ խօսած դամբանականին մէջ ըսաւ «նշեցեալի թաղման համար ՄինԱկ քարոզիչին ու քահանային դրամ պէտք է տալ. դագաղի, պստանքի, ծաղիկի և այլն բաներու տրուելիք դրամը պէտք է քաջաշունչի և փեսանէ Քիշեակի համար գործածել»:

Ռուսճուր

Միհրան Թիւթիւնճեան պատանին փափագեցաւ տեղւոյս ընթերցարանին բաժանորդագրուիլ, բայց որովհետև վարչութեան մէկ անդամին պատկանած կուսակցութեան չը վերաբերելու անլուր և քստման ռճիրը գործած էր, մերժուեցաւ:

(Այսպէս կը հասկցուի թէ կուսակցական մոլեռանդութիւնը ո՞ր աստիճանի հասեր է):

Բարիկ

Տիեզերահռչակ հայ հրապարակագիր մը խախտողութիւն ընել սկսաւ:

(Տէթայլ բառ բօսթ)

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ...

(Շարունակութիւն)

Ռուսճուր

Իրիկուան ժամը 4¹/₂ին Ռուսճուրի կաշարանը հասաւ, ուսկից կառք մը նստած՝ կէս ժամէն Ուն մէյտանի գացի. հոն ընթերցարանին ու սրճարաններուն մէջտեղը խանքաւս կախելով հազիւ թէ զայն աշարջաւիշ ընելու վրայ էի, ահա սրճարաններուն մէկէն երկու հոգի դուրս նետուեցան պողտելով:

— Աս ի՞նչ գատը եօռան մարդ ես եղեր, հազար անգամ ըսինք որ քու ըսածներդ հիմակուան ժամանակը չանցնիր:

— Գուր իշթէ ատանկ էք. ձեր խելքերն են որ ատանկ բաներու չեն հասնիր, դուք միակ գործիք ըլլալ գիտէք... ոչխարամիտ էք...

Բոժ.— Ի՞նչ է ան միւսիւ Գառլօ, ինչ կը վիճաբանես:

— Եղբայր, ընկերվարականութեան վրայ ժընէվէն նոր առած ծանօթութիւններս պիտի տայի, բայց ասոնք խօսք հասկցող մարդեր չեն որ. երկու խօսք ըրի՞ր մի, անմիջապէս կը բորբոքին, կը պողան, կը կանչեն, կը հայոյեն. ազգին դրամը ուտելէ ուրիշ բանի վրայ գաղափար չունին և ունենալ ալ չեն ուզեր:

— Եղբայր, քանի որ համոզուած ես թէ հոս մտիկ չի պիտի ըլլուիս, ատենաբանութիւններդ ուրիշ տեղ մը գնա ըրէ:

— Աղբար, ուր որ երթամ ասանկ կընեն, միթէ մարդս ապատ չէ՞ իր ուզած տեղը խօսելու. տե՛ս, Լոնտոնի մէջ ամէն փողոց ամպիօններ կան, որոնց վրայ ուղած ատենդ կրնաս խօսիլ:

— Հիմա ատոնք մէկ կոյմ ձգէ տէ. եկուք սա խանթարին վրայ նստէ նայիմ:

— Հէ՛. ատ ի՞նչ է. ես ատանկ բան չեմ ուզեր:

— Պիտի ուզես, պիտի ուզես, նստէ նա-
յիմ սիւնսանդ ուղուրդն է. (կը նստեցնէ)

— Եղբայր չեմ ուզեր կըսեմ. զօռնով
պիտի կշռես:

— Հապա ի՞նչ կարծեցիր. ինչպէս որ դուն
ինքզինքդ զօռնով մտիկ ընել տալ կուզես,
ես ալ անանկ բեղ պիտի կշռեմ. . . մի՛ ե-
րբար, կը քաշեմ կոր. . .

— Եղբայր, գոնէ սա ըսէ որ խանութարդ
ընկերվարական է թէ պուրժուական:

— Հիմա կը հասկնաս ինչ ըլլալը (կշռե-
լով). . . եթանասունըհինգ.

— Ի՞նչ կըսես Պ. Բոթոժիկ, պարզ ժողո-
վըդական մարդ մը այսչափ ծանր կուգայ
մի ես.

— Հիմա քառասուն կանոններ, կը համոզուիս.
էն առաջ սա գանձած բաժանորդագրիներուդ
փոխարէն չի տուած թերթերուդ համար 25
քիլո, ընկերվարականութեան հիմը խուզելու
նպատակաւ մտքիդ մէջ լեցուցած ալիսան-
լիքներուդ համար 100 կոամ, օգային խօս-
քերու, թռչունն ակնարկներու, գրպանդ լե-
ցուցած խել մը քիսքիսքու թուղթերու,
ինչպէս նաև հին աշխատանքի բառարանիդ
համար ալ 49 քիլո և 900 կոամ կը հաշ-
ուենք, անդին բան մը չի մնար. տեսա՞ր հի-
մա, ա՛լ ի՞նչ կուզես, ցնոցը տուր տէ՛ ժամ
առաջ Եւրոպա երթալդ նայէ:

— Անդին բան մը չի մնալէն ետքը ցնոցը
ուսկից պիտի տամ:

— Անանկ է. . . մենք այդ պարագան
մոռցանք, ընկերվարականները կուտ չեն բըռ-
ներ. ուրեմն երթաք բարով:

Այս միջոցին քանի մը անձեր փողոցին
մէջ խօսելով կուգային:

— Հաբաթ ագշամը իչին հա՛նկը օ-
յունու գոյաճաղը.

— Օնո՛ւ մու տիւշիւնիւյօրսըն. Գափա-
նօղու գօրը.

— Պէ՛ ճանըմ, կիթմէյօր. գա՛ն էիւզ
պին տէֆա տըր տէյիւ. թէչէքքի իտէյօր-
լար.

— Տո՛ւր պէ՛ ճանըմ, օյունուն իսմինի
տէյիշտիրիւի, օյուր կիտէր:

— Պաշգա՛, աղբար, պաշգա՛ պիր շէյ
օյնամալըյը. պէօյլէ ախ գափանօղումլա վախ
կիւվէճիմլէ օլմալ:

— Կիւվէճ տէտին տէ՛ եարըն ֆըրընա
պիր կիւվէճ վէրէլիմ մի.

— Պէ գարտա՛շ, շիմտի շու՛ իշիմիդէ
պագալըմ:

— Էօյլէ իսէ՛ զէյպէկիշիին իսմինի տէ-
իշտիրիւ, «ճամուրը չէրչիվէ» 4 բէրտէ եէ-
նի պիր գօմէտի տէյէրէք ալիդօ չըգարըրը.

— Տո՛ւր պագալըմ. ալաֆրանկա գօ-
միկին էֆքեարը նէ՞ տիր:

— Նէ՞ օյուրսա օյունն. թէնպէլլիյի
պիր թարաֆ էտիպ՝ աղըզ տատըյլա եէնի
պիր օյուն օյնամալըյը:

— Կէ՛լ գանթարա. կէլ գանթարա՛...

— Վա՛յ, Պ. Բոթոժիկ. հո՞ս եկեր էք.

— Այո՛ պարոններ.

— Մեզի ալ պիտի կշռես.

— Շիտակը, անանկ միտք մը ունէի,
բայց քանի որ դուք ինքզինքնիդ կշռելով կու-
գայիք, ալ հարկ չեմ տեսներ. մանաւանդ
որ ձեր գրպաններն ալ վարժապետներուն ու
խմբագիրներուն պէս թեթեւ կըլլան. քիչ մը
առաջ հին պաշտօնակից մը կշռեցինք, անկու-
տի. . . .

Ամենքը— Յիշեսցի՛ր և զմեզ.

— Տեսա՞ք մի ես՝. անկուտիաբար կըշ-
ռելու ըլլանք նէ ծայրը ո՛ւր կերթայ. միայն
թէ, խօսքը մէջերնիս, ժողովուրդը թատրո-
նէն չի պաղեցնելու համար, միւսիւ հայրիկ-
եանին ըսածին պէս քիչ մը աշխատեցէ՛ք,
նոր խաղեր տուէք: Հայտէ՛ բացուեցէք որ
մէկ երկու յաճախորդ կանչեմ.

— Յտեսութիւն Պ. Բոթոժիկ, մեր թատ-
րոնն ալ հրամմէ.

— Միտք ունիմ. երթաք բարով: Է՛
ճանըմ, կէլ գանթարա՛, կէլ գանթարա՛...
օ՛ օ՛. . . տիկին, խնդրեմ, շնորհք ըրէք,
հրամայեցէք ի գանթար:

(Շարունակելի)



ԳՈՒՇԱԿ
ԱՊԱԳԱՅԻ

կամ Զուարճալի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գիմել խմբագրութեան:

Մ. Զ.

ԹՈԹՈՎՍՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հա-
տորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա.
Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

ՄԵՂՔ Լ ԱՊԱՇԱՆԻ

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերասան 5 արար և 1 պատկեր,

Գրեց Տիրան Գ. Փափագեան

Գին 60 սանդիմ: Գիմել խմբագրութեան:

ԸՆԴԵՐՉԱԿ

ՈՐ ԴՆԱՐ ՀԱՅԱԿԱՆ

կամ Հաւաքածոյ

Հին եւ նոր Ազգ. երգերու

208 էջերէ բաղկացած սոյն
երգարանը կը ծախուի

Վառնա Ա. Զարպհանէլեանի գրատունը:
Դինն է 2 ֆր. թղթատարի ծախքը գը-
րատան վրայ ըլլալով: Դրամի փոխարէն
կ'ընդունուի Պուկարական Դադ. Դերմ.
Անգղ. և Թրքական չի գործածուած նա-
մակագրոյններ:

9

Печангица Взаимность — "Варна."
[Отговорникъ М. Сконовъ

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխաւորեալ

Ա. ՊԱՐԴԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած
են, որոնց 25,000ը պիտի շահին հե-
տեւեալ կարգաւ:

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր
" Յունիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

Մէկ թերթ.

1, 25 ֆ.
2, 50
3, 50
5, 15
2, 15
14, 40

Գաւորդ.

2, 50 ֆ.
4, 50
5, 50
7, 50
10, 50
12, 50
14, 80
28, 80

Կէս

5 ֆ.
8
10
14
12
8, 60
57, 60

Ամբողջ

10 ֆ.
16
20
28
24
17, 20
115, 20

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք
է գիմել Սեղանաւոր Տխար ՍԱՐԳՍԻ ՔԱՐԻԷԼԵԱՆ,
միակ գլխաւոր գործակալ սոյն վիճակահանութեան,
Վառնա, Մոսկովա:

Նըշակայ քաղաքներէն եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:
Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ
Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պար-
տաւոր է առջի կարգերուն փոխարէնն
ալ վճարել: